

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

“Ընտրված տարածքներում ագրոանտառաբուծության և հողերի վերանայում և նոր հողերի ընտրություն”,
GEF/QCBS-2019/003

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ (ԵԳՖԱԾ)
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՈՐԱԿԻ ԵՎ ԳՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼՈՒԿԱԼ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ /ԳԷՀ/ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ - 2000001401

Հայաստանի Հանրապետությունը դրամաշնորհ է ստացել ԳԷՀ-ից և այդ միջոցների մի մասը մտադիր է օգտագործել՝ **Ընտրված հողատարածքներում անտառապատման միջոցների դիտարկում և նոր հողերի ընտրություն, GEF/QCBS-2019/003** ծրագրի համար պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու նպատակով:

Խորհրդատվական ծառայությունները («Ծառայություններ») ներառում են Հողերի վերականգնման հանգամանալից գեկույցի կազմում: Ձեկույցը պետք է լինի համակողմանի ուսումնասիրություն, որը կներառի՝ **Ա. Հայաստանի Հանրապետության Մյունիքի և Արարատի մարզերի նախապես ընտրված տեղանքների համար կազմված վերականգնման և ներդրումների առկա 3 ծրագրերի վերանայում, Բ. Ընտրված տարածքներում վերականգնման միջոցառումների անհրաժեշտության հայտնաբերում և հաջորդիվ՝ ընտրված տեղանքների հաստատում կամ վերանայում, վերականգնման համար հավակնորդ նոր տեղանքների հայտնաբերում, քարտեզագրում և ներդրումային պլանների մշակում, որոնցում առաջարկված կլինեն յուրաքանչյուր տեղանքում կատարվելիք ներդրումների տեսակները, ծավալաթերթերը, իրականացման ընթացքը և համայնքի ներգրավվածությունը, Գ. Իրականացման աջակցություն:**

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն (ԾԻԳ) բոլոր շահագրգիռ խորհրդատու կազմակերպություններին հրավիրում է ներկայացնելու հետաքրքրության հայտեր՝ ծրագրի իրականացման համար խորհրդատու կազմակերպության ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով: Հետաքրքրված խորհրդատու կազմակերպությունները պետք է տրամադրեն տեղեկություններ, որոնք կփաստեն, որ կազմակերպությունն ունի Ծառայությունները կատարելու համար պահանջվող որակավորում և համապատասխան փորձ: Խորհրդատու կազմակերպությունը կարող է ներկայացնել միայն մեկ հետաքրքրության հայտ կամ որպես առանձին միավոր կամ համատեղ ձեռնարկության կազմում:

Հետաքրքրության հայտը պետք է ներկայացվի համաձայն ԾԻԳ-ի <https://raed.am/procurement/adstatements.html> կայքում հրապարակված **Առաջադրանքի պայմանների և Հետաքրքրության հայտերի ներկայացման ձևանմուշի** և պարունակի հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում-նամակ՝ ուղղված ԾԻԳ-ի տնօրենին.
- Հայտի տվյալները, ներառյալ՝ համատեղ ձեռնարկության կազմում գործընկերոջ տվյալները (ըստ տրամադրված ձևանմուշի).
- Տեխնիկական որակավորման պահանջներին համապատասխանող նախորդ նմանատիպ ծրագրերի մանրամասները, որտեղ հստակ նշվում է ներկայացված ծրագրի համապատասխանությունը համապատասխան չափանիշին: Ծրագրի մանրամասները պետք է ներառեն ծրագրի անվանումը, գտնվելու վայրը, բյուջեն, մեկնարկի ամսաթիվը, ավարտի ամսաթիվը, պատվիրատուի անվանումը և մատուցվող ծառայությունների շրջանակը (ըստ տրամադրված ձևանմուշի).

Այս փուլում ինքնակենսագրություններ (CV) չեն պահանջվում:

Խորհրդատու կազմակերպությունների կարճ ցուցակի կազմման չափանիշներն են.

ա) Նմանատիպ էկոլոյիմայական պայմաններում/տարածաշրջաններում հողերի դեգրադացման, լանդշաֆտների վերականգնման և (կամ) վերամշակման (ռեկուլտիվացիա) ոլորտներում հետազոտությունների և ծրագրերի իրականացման հաջողված փորձ (առնվազն 1 նմանատիպ ծրագիր վերջին 5 տարիների ընթացքում)՝ առավելագույնը 30 միավոր:

բ) նմանատիպ աշխատանքների վերաբերյալ ծրագրային կիրառելի հաշվետվությունների կազմման ապացուցելի փորձ, այն է՝ ներկայացնել նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կազմված հաշվետվություններ, նախընտրելի է տեղում իրականացված դաշտային աշխատանքների վերաբերյալ և ոչ թե միայն տեսական ուսումնասիրության արդյունքում կազմված ծրագրային հաշվետվություններ (առնվազն 1 նմանատիպ ծրագիր վերջին 5 տարիների ընթացքում, գերադասելի է Հայաստանում)՝ առավելագույնը 35 միավոր:

գ) առնվազն 3 տարվա աշխատանք լանդշաֆտների վերականգնման կամ հարակից բնագավառներում իրականացվող նմանատիպ ծրագրերում, մասնավորապես՝ շրջակա միջավայրի ակտիվ վերականգնման տեխնոլոգիաների և մեթոդների նախագծման և իրականացման, բուսականության վերականգնման/ռեկուլտիվացիայի մեթոդաբանության և հողերի վերականգնանք նպաստող բույսերի կառավարման մեթոդների վերաբերյալ փորձ (առնվազն 1 նմանատիպ ծրագիր վերջին 5 տարիների ընթացքում)՝ առավելագույնը 35 միավոր:

Կարճ ցուցակում ընդգրկվելու համար խորհրդատու ընկերությունը պետք է հավաքի նվազագույնը 75 միավոր:

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունն ենք հրավիրում «Իր գործառնություններում և գործունեության ընթացքում խարդախության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ ԳԶՄՀ-ի վերանայված քաղաքականության» վրա:

Խորհրդատուն կընտրվի Որակի և գնի վրա հիմնված ընտրության (QCBS) եղանակով՝ 2010 թ. սեպտեմբերին ԳԶՄՀ-ի կողմից հրապարակված «Գնումների ուղեցույցի և ձեռնարկի ընթացակարգերին» կամ դրանց երբևէ հրապարակված թարմացումներին համապատասխան:

Հետաքրքրության հայտը պետք է ներկայացվի անգլերեն լեզվով՝ 1 բնօրինակ և 1 պատճեն, էլեկտրոնային կամ թղթային տեսքով: Օրինակների միջև հակասության դեպքում առավելությունը կտրվի թղթային բնօրինակին:

Ծառայությունների առաջարկվող տևողությունը կազմում է 12 ամիս:

Լրացուցիչ տեղեկությունների կամ պարզաբանումների համար խնդրում ենք գրել procurement@raed.am էլեկտրոնային հասցեին: Պարզաբանումները պետք է ստացվեն վերջնաժամկետից առավելագույնը 7 օր առաջ, իսկ պատասխանները կհրապարակվեն առցանց՝ www.raed.am կայքում:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև 2020 թ. ապրիլի 27-ը՝ ժամը 18:00-ն:

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Ում՝ տնօրեն Աշոտ Վարդանյան
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Տիգրան Մեծ 4, 6-րդ հարկ
Հեռ.՝ 374 10 54 65 10, էլփոստ՝ procurement@raed.am